


տօնի նշանակելիս, անշարժ կայք, պարգևներ բաժանելիս ևն:

Համաժողովը իւր ընտրած մասնախմբի վրայ պարտք դրաւ՝ ամեն օրինական միջոցներով աշխատել, որ հոգևորականութեան վերոյիշեալ «սուրբ և արդարացի» պահանջներն անպատճառ իրագործուին: Քահանաների այս անսովոր ոճը՝ իրենց բարձր իշխանութեան մասին, իւր վրայ դարձրեց եպիսկոպոսների և մամուլի ուշադրութիւնը:

Եպիսկոպոսները մատնանիշ արին, որ քահանայք իրենց կարգապահութեամբ և դէպի իշխանութիւն տածած յարգանքով պէտք է ուրիշներին օրինակ լինին և չը պէտքէ խառնուին և հրահանգներ տան իրենց իշխանութեան:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն).

II

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բերգեմանի կարծիքով դաստիարակի ամենագլխաւոր նպատակը պիտի լինի պատրաստել և դաստիարակել կուլտուրայի յառաջագիմութեան գործի համար կարող և ուժեղ աշխատաւորներ: Բայց նախքան դաստիարակութեան մասին իւր հայեցակէտը պարզելը՝ նաև հարցնում է թէ իրագործելի է արդեօք այդ նպատակը. այս մի շատ լուրջ հարց է այն տեսակէտից, որ մարդկութեան կուլտուրական աշխատանքին մասնակցելը պահանջում է իւրաքանչիւր՝ մինչև իսկ աննշան աշխատաւորից մեծ և ծանր զոհեր՝ գործին կատարելապէս նուիրուել: Պատահում է, որ այս դժուարին ասպարիզի մէջ շատ անգամ

խորտակում է արիութիւնը, թուլանում են մարդու ուժերը և յաճախ սրտի մէջ մուտք են գործում անյուսուածեան զգացումները։ Որպէս զի մենք կարողանանք կուլտուրայի համար կռիւ մղել, մեր կրօնքում պիտի բունդեն են ուժեղ և կենդանի համերաշխութեան զգացմունքներ, այն գիտակցութիւնը պիտի լինի մեր մէջ, թէ մենք ընկեր ենք ընդհանուր գործի համար, այն ժամանակ դէպի մերձաւորն ու եղբայրն ունեցած սիրովը համակուած, մենք կարող կը լինինք թեթեւցնել այդ կռիւը և փոխադարձաբար օգնել մէկը միւսին։

Ուրեմն կենդանի համերաշխութիւն է հարկաւոր, ահա սա այն ոյժն է, որը պիտի զարգացնել մարդու մէջ նորահամար, որ նա կարող և ընդունակ լինի դառնալ մաքառող ընդհանուր գործի յառաջադիմութեան համար։ Բայց կարելի է արդեօք զարգացնել այդ ոյժը, կարո՞ղ են դաստիարակները երիտասարդների սրտերի մէջ վառել այն սիրոյ հուրը դէպի հայրենիքը և մարդկութիւնը, առանց որի չի կարելի կռուել նոցա շահերի համար։

Կան յոռետեսներ, որոնք բացասական պատասխան են տալիս այս հարցին։ Նոցա կարծիքով պատմութիւնը ցոյց է տալիս, որ մարդկութիւնը աստիճանաբար, բայց անշեղ ընթանում է բարոյական տեսակէտից դէպի յետ, աւելի վատանում և այլասեւում է։ Պատմութեան հոսանքը իբր թէ տանում է մարդկութիւնը դէպի անկման և քայքայման խորխորատը։ Աշխատել կանգնեցնել այդ հոսանքը, կամ ներկայ սերունդին հեռու պահել այդ կեղտոտ ալիքներից, թէև հերոսական, բայց և այնպէս անմիտ փորձ է...

Բերդեմանի կարծիքով դա սխալ է. հարկաւոր էլ չէ պատմութեան հոսանքը դադարեցնել, որովհետև մարդկութիւնը յառաջադիմում է բարոյական տեսակէտից և թէև դանդաղ, բայց առաջ է գնում։ Հին ժամանակներում մարդ ընդունակ էր սիրելու միայն իւր ընտանիքի անդամներին և իւր ցեղը, ուրիշ ընտանիքի և ցեղի անդամները նորա համար թշնամի էին, որոնց դէմ նա

կուում էր: Կամաց կամաց մարդկութեան զարգացողութեան հետ խորտակում են ցեղական և ընտանեկան թընամութեան այդ սահմանները, առանձին ցեղերը և ընտանիքները միանում են իբրև մի ժողովուրդ, մի պետութիւն, մի հասարակութիւն և մարդու հոգու մէջ զարգանում է մի տեսակ ընդունակութիւն՝ սիրելու ամբողջ ազգութիւնը, որին նա պատկանում է: Բացի դորանից, մարդկութիւնն անկասկած յառաջագիմում է այդ մտքով, որ առանձին պետութիւնները միանում են իբրև մի ամբողջութիւն, այժմ արդէն կան այդ միութեան սաղմերը — դոքա միջազգային օրէնքի սաղմերն են: Մարդկանց ներքին միութեան յառաջագիմութեան հետ ի միասին մենք նկատում ենք, որ նոցա հոգին դառնում է աւելի լաւ և մաքուր, նոքա իրանց ուժերի մեծ մասը նուիրում են հասարակական շահերին և նոցա օգտին են ծառայում:

Այսպիսով պատմութիւնը ոչ թէ հակառակ է մանկավարժութեան, այլ օգնում է նորան. պատմական յառաջագիմութեան դանդաղ շարժուող ալիքները տանում են մարդկութիւնը ոչ թէ դէպի անբարոյականութիւնը, այլ համերաշխութեան աշխարհը. մարդկանց սրտում ոչ թէ հանգչում, այլ աստիճանաբար վառւում են ընկերական զգացմունքների կայծերը: Այդ նոյն աստուածային կայծերը թագնուած են իւրաքանչիւր մատաղ սերունդի հոգու մէջ. և միթէ այն միտքը, որը աշխատում է վառելու այդ կայծերը և դարձնելու մի պայծառ բոց, նոցա մէջ եղած մարդասիրական ձգտումների սերմերը զարգացնելու, իբրև կենդանի և տիրապետող զգացմունք համերաշխութեան, միթէ այդ միտքը անմիտ մի ցնորք է: Կարող են դոքա ասել նաև թէ «ենթադրենք որ հասարակութիւնը յառաջագիմում է մինչև իսկ բարոյական տեսակէտից, բայց այդ փաստը դեռ ևս չի վճռում այն հարցը, թէ կարելի է դաստիարակել ցանկացած ուղղութեամբ հասարակութեան իւրաքանչիւր անհատին: Քանի որ մանկավարժները Լօքքի հետ մասամբ հաւատում էին թէ մանկան հոգին իբրև մի մաքուր տախտակ է (tabula

րաճա), այս հարցը ինքնըստինքեան վճռուում էր, այսինքն որ ամեն բարձր ձգտումներ կարելի է արմատացնել այդ տեղւոյ Բայց ժամանակակից մանկավարժութիւնը հոգեբանական այդ հեքիաթը *tabula rasa*-ի մասին հերքեց. մանկավարժութիւնը իւր ուշադրութիւնն է դարձնում ոչ թէ վերացական մի անձնաւորութեան վերայ, «առհասարակ մարդ» կոչուածի վերայ, այլ թա՛ճրացեալ մի առարկայի՝ սանի վերայ, որը իրականութեան մէջ գոյութիւն ունի և ոչ թէ մանկավարժական երեւեցական աշխարհում գոյութիւն ունեցողի վերայ: Իսկ երբ որ այդ իրական մարդը առաջին անգամ կանգնում է դաստիարակի առաջ, այն ժամանակ երևում է, որ այդ փոքրիկ էակի հոգու մէջ արդէն կան որոշ սաղմեր ապագայ անհատականութեան զարգացողութեան համար, որոնք երբեմն մութ և անորոշ են լինում, զարգացման ձգտող յատկութիւններ են ունենում. լաւ է որ այդ սաղմերը բարեյաջող բնաւորութիւն են ունենում: Իսկ եթէ այդպէս չէ, այն ժամանակ կարող է դաստիարակը նորա զարգացողութեան առաջն առնել և մարդու մէջ արմատացնել նոր-լաւ-յատկութիւններ: Այո՛, պատասխանում է Բերգեմանը, կարող է գոնէ մի որոշ չափով. մանկավարժութիւնը միջոցներ ունի և նորա համար, որ ազդէ մարդու զգացմունքի վրայ, փոխէ նորա բնաւորութիւնը. եթէ մենք աշխատենք յառաջ բերել սանիկի մէջ որոշ զգացմունքներ, այն ժամանակ նորա կը դառնան նորա համար սովորական, ուժեղ և կորոշեն նորա գործողութիւնը. և ընդհակառակն նորա որոշ հակումները չը շոյելով, մենք կարող ենք արմատախիլ անել. նորա անսովոր կը դառնան մարդու համար: Ընթանալով այսպէս՝ մենք կարող ենք մինչև իսկ եսասէր մարդու մէջ զարգացնել ուժեղ մարդասիրական ձգտումներ: Ասում են թէ գոյութիւն ունին մանուկներ բարոյապէս բոլորովին ընկած, իբր թէ այդպիսիների հետ ոչինչ չի կարելի անել, միայն պիտի կտրել, հեռացնել նոցա հասարակութիւնից, մէնակութեան պիտի դատապարտել: Բերգեմանը ենթադրում է, թէ որովհետև մանկավարժական գիտու-

թիւնն ու միջոցները դեռ այնքան բարձր վիճակում չեն գտնուում, ուստի մենք իրաւունք չունինք խօսելու անուղղելի մանուկների մասին. մենք միայն կարող ենք հաստատել, որ ժառանգական յատկութիւնները ենթարկւում են դաստիարակութեան ազդեցութեան մինչև որոշ սահմանները. բայց այդ սահմաններն այնքան նեղ չեն, ինչպէս յաճախ մտածում են. և դաստիարակը կատարած կը լինի իւր պարտքը ոչ վաղ, քան երբ կը հասնի անընկճելի արգելքների: Այսպիսով տեսնում ենք, որ դաստիարակել կարելի է, բայց ի՞նչ միջոցներով:

Որպէս զի ամբողջ կեանքի ընթացքում մարդ կարողանայ անխոնջ մաքառել կուլտուրայի համար, պէտք է ունենայ լուսաւոր գլուխ, ազնիւ սիրտ և բարոյապէս ուժեղ կամք: Հոգու այս բարձր յատկութիւնները վիճակւում են միայն նոցա, որոնք զարգացած են լինում ներդաշնակօրէն — մտաւոր, բարոյական և ճաշակագիտական տեսակէտից: Ահա թէ ինչու մենք պիտի աշխատենք մասաղ սերունդը զարգացնել այս բոլոր կողմերից, եթէ յիշաւի ուզում ենք կուլտուրական յառաջադիմութեան համար մաքառողներ պատրաստել: Այնուհետև դառնալով այն միջոցներին, որոնց օգնութեամբ կարելի է զարգացնել մարդու մտաւոր, բարոյական և ճաշակագիտական ոյժերը, Բերդեմանը անհրաժեշտ է համարում ձեռնարկելիք միջոցները, որոնք ապահովացնում են մանկան զարգացողութեան անհրաժեշտութիւնը սանիկի կամքի և զգացմունքի կանոնաւորութեան ճանապարհով, մի քանի ընդհանուր նկատողութիւններ է անում պարբերաբար կրկնող յառաջադիմութեան զարգացողութեան նշանակութեան մասին և կանգ է առնում աւելի մանրամասն դասաւորութեան դաստիարակչական դերի մասին:

Որոշելով ուսուցման դերը մտաւոր զարգացողութեան գործում, Բերդեմանը իւր գլխաւոր ուշադրութիւն է կենտրոնացնում նորա վերայ, թէ ի՞նչ առարկաների ուսուցմամբ կարելի է դաստիարակել մանկանց՝ կուլտուրայի համար ապագայ մաքառողներին. այդ առարկաների

Թուին են պատկանում մաթեմատիկան, բնական պատմութիւնը, աշխարհագրութիւնը և ազգային լեզուն, նաև հասարակական գիտութիւնները: Յառաջագիմութեան համար ապագայում ծառայողը պէտք է հետևէ ընդհանրապէս հասարակական—կուլտուրական զարգացողութեան ամբողջ ընթացքին՝ իւր սկզբնաւորութիւնից մինչև ներկայ ժամանակը: Այդ ժամանակ սանիկները պիտի ծանօթանան ոչ թէ միայն իրանց հայրենի երկրի զարգացման պատմութեան հետ, այլ և ամբողջ մարդկութեան, հակառակ դէպքում նոքա չեն հասկանայ ոչ ազգային կուլտուրայի զարգացողութիւնը, ոչ նորա նշանակութիւնը՝ իբրև հանրամարդկային յառաջագիմութեան գործողութեան մէջ մի գործոն ոյժ: Բայց ամենաշատ ուշագրութիւն պիտի դարձնել հայրենի երկրի զարգացման պատմութեանը, մարդչէ կարող անմիջական մասնակցութիւն ունենալ ամբողջ մարդկութեան կուլտուրական գործին, այդ գործի մէջ իւր բաժինը նա կարող է կատարել գլխաւորապէս մաքառելով իւր հայրենիքի յառաջագիմութեան համար, ուստի մարդ պէտք է ամենից առաջ և ամենից աւելի ազգային պատմութիւնը իմանայ և նորա համար աշխատէ:

Բայց ինչ հարկաւոր է ուսումնասիրել կուլտուրայի պատմութիւնը, ինչ կարող է տալ այդ պատմութիւնը սանիկին. Օլոգիմանն ասում է, թէ այդ պատմութիւնը կը ծանօթացնէ նորան այն ոյժերի հետ, որոնք շարժել են հասարակութիւնը դէպի յառաջագիմութեան ճանապարհը և այն արգելքների հետ, որոնց հանդիպել է նա իւր զարգացողութեան ընթացքում: Կուլտուրայի պատմութիւնը սանիկի աչքերի առաջ բաց կանէ ներկայ հասարակական կեանքի պատկերը և կը լուսաւորէ նորա առաջ ապագայի իդեալները, նա կիմանայ ինչո՞ւ և ինչպէ՞ս աշխատել. բացի դորանից նա կը համոզուի, որ աշխարհում գոյութիւն ունի մի մեծ գործ, որի առաջ անձնական վշտերն ու ուրախութիւնները կանցետանան—դա հասարակութեան յառաջագիմութեան գործն է, երիտասարդի հոգին կը լցուի հասարակական գաղափարների կենդանի

կրակով և նա կը հասկանայ, թէ ինչպէս մի ամբողջ ժողովրդի, այնպէս էլ նորա առանձին անհատների արժանաւորութիւնը չափուում է մարդկային հասարակութեան կուլտուրական զարգացման գործողութեան մէջ նոցա մասնակցելու բնաւորութեամբ, երիտասարդութիւնը կը տեսնէ այն ժամանակ իւր իդեալը այն մարդկանց մէջ, որոնք անխոնջ մաքառել են յառաջադիմութեան համար՝ տալով նորան բոլոր ոյժերը և մինչև իսկ իրանց կեանքը։ Երիտասարդ մարդիկ կը հասկանան, որ իսկական մարդկային կեանք կարելի է միայն հասարակութեան մէջ և նորա համար։ Սորանից ի հարկէ, չի հետևում թէ նոքա պիտի հրաժարուին իրանց անհատականութիւնից, անհատական ընդունակութիւնների զարգացման տեսակէտից, ընդհակառակը՝ կուլտուրական յառաջադիմութեան պայմաններից մէկն ևս հանդիսանում է աշխատանքի այնպիսի բաժանում, որ անհատական ընդունակութիւնները գտնէին լայն ասպարէզ իրանց աշխատանքի և զարգացողութեան համար։ Բայց ահա թէ ինչ չը պէտք է նոքա մոռանան, իրանց անհատական ոյժերը նոքա պիտի զարգացնեն ոչ թէ իրանց անձնական բարեկեցութեան համար, այլ ընդհանուր յառաջադիմութեան, և այնպիսի ուղղութեամբ նոցա անհատականութիւնը միմիայն կը շահէ, որովհետև միայն մարդասիրական գաղափարների կենդանի լուսով զարգանում են հոգու այն բարձր շնորհները, որոնք մարդկային անձնաւորութիւնը դարձնում են ներքուստ գեղեղեցիկ և ուժեղ։ Վերոյիշեալից հետևում է, որ կուլտուրայի պատմութեան ուսուցումը զարգացնում է մարդուն ոչ միայն մտաւորապէս, այլ բարոյապէս, այդ ուսուցումը ներշնչում է սանիկին այնպիսի գաղափարների, զգացմունքների և ձգտումների մի շարք, որոնք ստիպում են մարդուն տեսնելու յառաջադիմութեան ծառայելու գործում իւր կեանքի ամենանուիրական և թանկագին նպատակը, իւր բարոյական սլարաքը։

Ժամանակակից մանկավարժութիւնը շատ է խօսում հայրենասիրական զգացումների մասին և բոլորովին լռում

է մարդասիրական զգացումների մասին խօսելուց, մանկավարժներից շատերը, ինչպէս երևում է, ենթադրում են թէ անհրաժեշտ է սանիկի հոգու մէջ արմատացնել սէր միայն դէպի հայրենիքը, հանրամարդկային զգացումները իբր թէ իրանք իրանց կը զարգանան: Մի՞թէ այդպէս է, չէ՞ որ ներկայ ժամանակ մարդ աշխարհ է գալիս այնպիսի յատկութեան սաղմերով, որոնք յայտնւում են արդէն իբրեւ որոշ սաղմեր՝ սիրոյ դէպի հայրենիքը, մարդու հոգու մէջ առաջին օրերից ապրում է ձգտումն՝ մօտենալ շրջապատող բնութեան, մօտիկ մարդկանց, տալ նրանց իւր սրտի մի մասը. այդ ձգտումը պատահում է ամեն քայլափոխում բարեյաջող հանգամանքների մէջ, մարդ միշտ շնչում է հայրենիքի օդը, տեսնում է իւր շուրջը հայրենեաց բլուրները և դաշտերը, լսում է մայրենի լեզուի ձայնը և միանում է հազարաւոր կապերով իւր շրջապատի մարդկանց հետ ու բոլորովին բնական է, որ սովորում է սիրել իւր ազգը և իւր հայրենիքը, «ազգային» և «սրտի համար թանկագին» խօսքերը հոմանիշ են գառնում: Ուրեմն թէ այդպէս է, էլ ինչու համար մանկավարժներն աշխատում են սանիկի հոգու մէջ արմատացնել սէր դէպի հայրենիք. այդ սէրը ամրանում է մարդու մէջ և առանց մարկավարժների աւելի լաւ՝ յուժկու ուժերով ժառանգականութեան և միջավայրի շնորհիւ: Մանկավարժները պիտի աշխատեն ոչ թէ այդ սէրը զարգացնելու, որ առանց այն էլ զարգանում է, այլ որ նոքա տան այդ զգացման խելացի բովանդակութիւն և ուղղութիւն. թող նոքա ձգտեն, որ իրանց սանիկները հասկանան և սիրեն հայրենեաց ժողովրդին, թող երիտասարդների հոգու մէջ վառեն ձգտումն աշխատելու այդ ժողովրդի համար, իրանց բոլոր ոյժերը, թանկագին խօհերն ու մտածմունքները դորձադրեն նորա օգտին, ամեն բան զոհեն նորա բարօրութեան համար, եթէ դա անհրաժեշտ կլինի: Ահա այսպիսի սէր պիտի զարգացնել մանկանց մէջ և ոչ թէ հասարակ զգացում՝ նուիրուելու այն ամենին, ինչ որ ազդին է վերաբերում կամ նորան

պատկանում, իսկ շատ մանկավարժներ աշխատում են
 ընդհակառակը զարգացնել հէնց այս վերջին տեսակի
 զգացում: Այսպիսով դէպի հայրենիքն ունեցած սէրը
 կը զարգանայ և առանց մանկավարժական միջոցների, ման-
 կավարժների գործն է ոչ թէ այդպիսի սէր արմատացնել,
 այլ տալ այդ սիրոյ խելացի բովանդակութիւն և ուղղու-
 թիւն: Ինչ վերաբերում է հանրամարդկային և համայնա-
 քաղացիական սիրոյն, որպիսին անհրաժեշտ է արմա-
 տացնել՝ չէ որ ներկայ—գեռ ևս ոչ այնքան բարձր հա-
 սարակական զարգացողութեան աստիճանի վրայ գտնուող
 մարդիկ առանձին հակումն չեն ցոյց տալիս դէպի օտար
 աղքերը. մարդկանց մեծամասնութիւնը տածում է դէպի
 օտար երկրացիները աւելի թշնամական՝ քան բարեկամա-
 կան զգացում: Դաստիարակութեան խնդիրն է մատաղ
 սերունդի հոգուց արմատախիլ անել այդ բնազդական
 թշնամութիւնը և փոխարինել նորան սիրով, մարդասիրա-
 կան զգացմունքով: Թող երիտասարդ մարդիկ հասկանան,
 որ բոլոր ժողովուրդները մի նպատակ ունեն, այն է աշ-
 խատել հանրամարդկային յառաջադիմութեան համար.
 թող սանիկները հասկանան, որ այդ գործի մէջ չեն կա-
 րող լինել թշնամիներ, այլ կարող են լինել միայն մէկը
 միւսին օգնող եղբայներ, թող նոքա տեսնեն, որ հայրե-
 նեաց պատմութիւնը անքակտելի կերպով կապուած է
 եւրոպական ցեղի բոլոր ժողովուրդների պատմութեան
 հետ, որ ամենաթանկագին կուլտուրական բարիքը կը լինի
 ոչ թէ միջազգային թշնամութիւնը, այլ փոխադարձ օգ-
 նութիւնը, թող վերջապէս սանիկները հասկանան, որ ոչ
 զինուորական ոյժը և ոչ էլ զանազան երկրների գրաւումը
 պէտք է կազմեն որ և է ժողովրդի փառքի պսակը, այլ
 ընդհանուր յառաջադիմութեան գործի մէջ նորա ցոյց
 տուած եռանդոտ գործունէութիւնը:

Եւ որքան օգուտ կունենար հասարակութիւնը, եթէ
 մանկավարժները երիտասարդների մէջ զարգացնէին սե-
 րունդէ սերունդ այդպիսի մարդասիրական զգացումներ,
 մարդասիրութեան կենսատու ոյժերը աստիճանաբար կը

Թափանցէին հասարակութեան հոգու խորքերը և իւրաքանչիւր պետութեան բախտի որոշողները ստիպուած կը լինէին իրանց պատուասիրութեան համար որոնել աւելի պատուաբեր գործ, քան թէ այդ մշտական զինաւորումը, որը երկրի տնտեսական ոյժերը քայքայում և կուլտուրայի յառաջադիմութեան գործին վնասում է:

Ահա այն զգացմունքները, որոնք պիտի զարգացնուին երիտասարդութեան մէջ.— խելացի, անկեղծ և ջերմ սիրոյ զգացմունք դէպի ընկերն ու մարդկութիւնը: Այսպիսով ներդաշնակօրէն շաղկապելով միմեանց հետ ազգային և համաքաղաքիական զգացմունքները, սոքա հանդէս կը գան իբրև ամենակարևոր լծակները երիտասարդ սերունդի բարոյական զարգացողութեան, նոցա քաղաքացիական դաստիարակութեան համար:

Դառնալով ճաշակագիտական զգացմունքի զարգացման խնդրին՝ Բերգեմանը ցոյց է տալիս ամենից առաջ, որ գեղարուեստը հանդիսանում է իւրաքանչիւր ժողովուրդի կուլտուրական կեանքի իբրև հիմնական տարրերից մէկը: Մի կաղմակերպեալ ամբողջութեան հետ ի մի ձուլելով ձևը և բովանդակութիւնը, նիւթը և հոգին, գեղարուեստը ջերմացնում է մեր կեանքը ներդաշնակութեան իդեալով, զտում և բարձրացնում է մեր միտքը, առողջացնում է հիւանդ հոգին, յոգնած սրտին տալիս է նոր զարկ և նոր հաւատ: Բայց գեղեցկութեան այդ կախարդիչ ազդեցիկից միայն սակաւ ընտրեալներն են իրանց դադափարների համար օգտուում. իսկ եթէ կամենում ենք դաստիարակել զուարթ և գործին նուիրուած աշխատաւորներ, այն ժամանակ պէտք է ընդարձակ ասպարէզ բանանք երիտասարդութեան առաջ այդ բարձր և մաքուր բաւականութեան համար, որը բերում է իւր հետ գեղարուեստը: Կանգ առնելով այն պատճառների վրայ, որոնք դժուարացնում են գեղարուեստի մուտքը ժողովրդական այլ և այլ խաւերի մէջ, Բերգեմանը ցոյց է տալիս ի միջի այլոց և այն, որ դէպի գեղարուեստը տանող ճանապարհները ներկայումս շատ դժուար և փշոտ են: Կար-

Ճեւ թէ գեղարուեստագէտները պատնէշ են կանգնեցրել իրանց և հասարակութեան մեծամասնութեան մէջ, նոքա խօսում են պատկերներով, որոնք ժողովրդի մեծամասնութեան անհասկանալի են, ոգևորութիւն են որոնում իդեալի աշխարհում, որոնք հասարակական կեանքի համար օտար են. քանդակագործները իւրացնում են հին ժամանակի տիպեր և աստուածութիւններ, իսկ նկարիչները սկսում են խորհրդաւոր բովանդակութեամբ նկարել, որոնց քննելու համար հարկաւոր է մասնագիտական պատրաստութիւն. նկարիչները, ինչպէս երևում է, ենթադրում են, որ գեղարուեստը չի կարող ամբօխին հասկանալի լեզուով խօսել, ինչո՞ւ, չէ՞ որ նկարիչները դիմում են ճաշագիտական զգացման ձայնին, ի հարկէ նա միակերպ չէ զարգացած ամեն մէկի մօտ, բայց խոշոր տարբերութեան հետ ի միասին գոյութիւն ունի և շատ նմանութիւն, որի շնորհիւ գեղարուեստի լեզուն հասկանալի կը լինի ոչ միայն բնութեամբ «ընտրեալ» մարդկանց, այլ և սովորական մահկանացուների մեծամասնութեան: Ասում են թէ եթէ գեղարուեստը մանի ժողովուրդի մէջ և դառնայ ռամկական թէ լեզուով և թէ իդեալներով, այն ժամանակ նա կը յետադիմէ և անկման կը դատապարտուի: Մի՞թէ այդպէս է. հելլադայի նշանաւոր նկարիչները ստեղծում էին բոլոր քաղաքացիների համար և ոչ թէ մի քանի բնորեալների, և այնուամենայնիւ յոյների գեղագիտական ձիրքերը զարգացման բարձր աստիճանի վրայ էին գլուխում: Միջնադարեան գեղարուեստը ժողովրդական կեանքի խորքերից էր օգտւում իւր ոյժերի համար և դա միայն օգնեց նորա ծաղկման: Ներկայ գրականութիւնը, գոնէ ի դէմս իւր լաւագոյն ներկայացուցիչների, նոյն ճանապարհով է ընթանում, նա ձգտում է ժամանակակից հասարակութեան և ժամանակակից մարդու հոգին գուշակել, թափանցել զգացմունքի և մտքի, հաւատալիքների և ազգային ձգտումների գաղտնիքները, լսել նորա սրտի բաբախումը և պատմել մարդկանց այն մեծ և իսկական ճշմարտութեան մասին, որին նոքա այդպէս ագահ

և այդպէս առ այժմ՝ զուր որոնում են։ Եւ գրականութիւնը ոչինչ չը կորցրեց դորանից. նա ի հարկէ շատ հեռու է կատարելութիւնից, բայց այժմ արդէն նորա կողմն է մեր համակրութիւնը և նորանից ենք սպասում նոր և բարձր գեղարուեստագիտական ստեղծագործութիւն, նոր և բարձր ձևեր։ Ինչ վերաբերում է գեղարուեստի այն ճիւղերին, որոնք կեանքից կտրւում և գնում են դասական դիցաբանութեան կանխամտածած կերպարանքների թագաւորութիւնը, մենք տեսնում ենք թէ ինչպէս նորա կորցնում են իրանց ոյժերը և մահուան դատապարտւում։

Այսպիսով գեղարուեստը պիտի մօտենայ հասարակութեան, բայց և ընդհակառակն մանկավարժները պիտի հոգան, որ գեղագիտական զարգացումը դառնայ մատաղ սերունդի սեփականութիւն։ Մանուկները պիտի անպատճառ սովորեն նկարչութիւն, քանդակագործութիւն, երաժշտութիւն և բանաստեղծութիւն։ Բայց այս դէպքում գլխաւոր ուշադրութիւն պիտի դարձնել ոչ թէ անունների և թուի վերայ, ոչ թէ ամեն տեսակ կանոնների և պատմական տեղեկութիւնների վերայ, այլ նորա վերայ, որ մանուկները թափանցէին որքան հնարաւոր է գեղարուեստի ստեղծագործութեան էութեան խորքը, սովորէին հասկանալու շրջապատող բնութիւնը և հասարակական երևոյթներն այնպէս, ինչպէս այդ անում են նկարիչները, այսինքն հասկանալով աշխարհային և մարդկային կեանքի գեղագիտական կողմը։

Ա. Շահնուգարեանց.

